<ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ> ԲԲԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ Հ.1Խ-24

ք. Երևան, Արշակունյանց պողոտա 12 **12.03.2024թ., ժամը 17:00**

Նիստին ներկա էին՝ խորհրդի 9/ինը/ անդամները:
Խորհրդի անդամներ՝ -
Հ. Ռ. Շիրինյան (նախագահ), Գրիգորյան Ս.Է., Գամբուրյան Ս.Կ., Երոյան Տ.Ս., Մաթևոսյան Է.Հ., Հակոբյան Ն.Խ., Եսայան Հ.Լ, Մինասյան Մ.Հ. և Ղազարյան Գ.Գ.:
Հրավիրված անձ՝ գլխավոր հաշվապահ – Մակարյան Ազատուի Սերոժի

Նիստի օրակարգը՝

- Ընկերության 2023թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտակցված աուդիտորական ընկերության մրցույթի արդյունքների մասին (զեկուցող՝ խորհրդի նախագահ Հրանտ Շիրինյան):
- Ընկերության ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանման, դրանց բացահայտման և ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից թողարկված արժեթղթերով գործարքներ կնքելու գործընթացը կարգավորող ներքին կանոնակարգի հաստատման վերաբերյալ (զեկուցող՝ խորհրդի անդամ Ներսես Հակոբյան):
- Ընկերության ազատ տարածքները վարձակալության տալու և ֆիրմային խանութների գործունեության դադարեցման, վարձակալության պայմանագրերի լուծարման արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև հյուսիսային պողոտայում գտնվող խանութ սրահի տաղավարի նոր տարածքի մասին (զեկուցող՝ խորհրդի անդամ Սարգիս Գամբուրյան):
- Ընկերության հակահրդեհային անվտանգություն պահպանման տեխնիկական միջոցառումների վերաբերյալ (զեկուցող՝ խորհրդի անդամ Ներսես Հակոբյան):
- Ընկերության կաթսայատանը գտնվող հիմնական միջոցների վառարանների և ջիլեռի վաճառքի վերաբերյալ (զեկուցող՝ խորհրդի անդամ Ներսես Հակոբյան):
- Ընկերության կանոնադրության համապատասխանությունը 06.01.2022թ. ՀՀ Օրենքի <Բաժնետիրական ընկերությունների մասին> համապատասխան (զեկուցող՝ խորհրդի անդամ Ներսես Հակոբյան):
- Այլ հարցեր

Ժողովը բացեց խորհրդի նախագահ Հրանտ Ռուբենի Շիրինյանը և ձայնը տվեց խորհրդի անդամ, Ընկերության գլխավոր տնօրեն Տիգրան Սամվելի Երոյանին:

Նա ասաց, որ Ընկերությունը սույն թվականի հունվարի 29-ին դիմել է <ԵԹԵՐ> շաբաթաթերթին փետրվարի 5-ի համարում տեղադրել հետևյալ հայտարարությունը՝ <ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ> ԲԲԸ հայտարարում է մրցույթ Ընկերության 2023թ. ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնող մասնագիտացված աուդիտորոկան ընկերության ընտրության համար: Հայտերը ընդունվում են մինչև սույն թվականի մարտի 5-ը: Ստացվել է երկու հայտ՝ <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ից և <Կոնտրոլ Սթար> ՍՊԸ-ից, որոնք իրենց աուդիտորական գործունեությունն իրականացնում են Հայաստանում բավականին հայտնի ընկերությունների համար:

Խոսքը տրվեց գլխավոր հաշվապահ Մակարյան Ա. Ս.

Նա ասաց, որ մրցույթին մասնակցող ընկերությունները, ելնելով իրենց կատարողականից և առաջարկվող գնից, կարող են մասնագիտական օբյեկտիվ աուդիտ իրականացնել: Սակայն <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ն տվյալ ոլորտում ունի 14 տարվա աշխատանքային փորձ, իսկ <Կոնտրոլ Սթար> ՍՊԸ-ն ընդամենը 2 տարի: Ուստի նա առաջարկում է խորհրդի անդամներին քվեարկել՝ ելնելով ոլորտում մասնագիտական փորձից, այլ ոչ թե գնային առաջարկից:

Ելույթ ունեցան խորհրդի անդամներ Մաթևոսյան Է.Հ., Եսայան Հ.Լ., Մինասյան Մ.Հ. և Ղազարյան Գ.Գ., նրանք իրենց ելույթներում համաձայնվեցին գլխավոր հաշվապահի փաստարկներին և առաջարկեցին կողմ քվեարկել <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի համար:

Բաց քվեարկությանը դրվեց <Կոնտրոլ Սթար> ՍՊԸ-ի և <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի Ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործնեության աուդիտ իրականացման հարցը՝

<Կոնտրոլ Սթար> ՍՊԸ-ի – 3 /կողմ/, 6 /վեց/ դեմ, ձեռնպա – չկա.

<Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ի – 6 /կողմ/, 2 /երկու/ դեմ, 1 /մեկ/ ձեռնպա;

Բաց քվեարկությամբ Ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործնեության աուդիտ իրականացումը պատվիրվում է <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ընկերության 2023 թվականի ֆինանսատնտեսական գործնեության աուդիտ իրականացնող անձ ընտրել <Պրոգրես-Աուդիտ> ՓԲԸ-ին:

Երկրորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց խորհրդի անդամ Ն. Խ. Հակոբյանին: Նա ասաց, որ իր կողմից մշակվել է Ընկերության ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանման, դրանց բացահայտման և ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից թողարկված արժեթղթերով գործարքներ կնքելու գործընթացը կարգավորող ներքին կանոնակարգը: Ընկերության խորհրդի անդամները նախապես՝ մեկ շաբաթ առաջ, ծանոթացել են կանոնակարգի թղթային տարբերակին: Նրանք ներկայացրին իրենց առաջարկությունները և դիտողությունները, որոնք տեղում քննարկվեցին և փոփոխություններ մցվեցին նախագծի տարբերակում:

Քվեարկության դրված հարցն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 9 /ինը/ կողմ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանման, դրանց բացահայտման և ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից թողարկված արժեթղթերով գործարքներ կնքելու գործընթացը կարգավորող ներքին կանոնակարգը:

Երրորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց խորհրդի անդամ Ս. Կ. Գամբուրյանին: Նա ասաց, որ խանութ սրահ /հասցե՝ Արշակունյանց 34/3/ փակվել է և պայմանագիրը տարածքի վարձակալության համար լուծարվել է: Իր ելույթում նա առաջարկեց խորհրդի անդամներին Երևան քաղաքի փոքր կենտրոնի մարդաշատ վայրերում մի քանի տարածք: Սակայն խորհրդի անդամները մերժեցին այդ տարածքների վարձակալելը, հաշվի առնելով չափազանց մեծ մեկ քառակուսի մետր վարձակալության գնի պատճառով: Հյուսիսային պողոտայում գտնվող <Էմիլ Գրիգորյան> Ֆիրմային խանութի տարածքի վարձակալությունը կդադարեցվի սույն թվականի մարտի 20-ից: Համապատասխան գույքագրման հրամանի

խանութում գտնվող թանկարժեք իրերը կհանձնվի Ընկերության պատրաստի արտադրանքի թիվ 7 պահեստ:

Քվեարկության դրված հարցն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 9 /ինը/ կողմ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հանձնարարել խորհրդի անդամ, իրացման գծով տնօրեն Սարգիս Կարապետի Գամբուրյանին շարունակել բանակցել և գտնել <Էմիլ Գրիգորյան> Ֆիրմային խանութի համար վարձակալման տարածք, ժամկետը՝ մինչև սույն թվականի սեպտեմբերի 1-ը:

Չորրորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց խորհրդի անդամ Ն. Խ. Հակոբյանին: Նա ասաց, որ Ընկերության հակահրդեհային անվտանգություն պահպանման համար անհրաժեշտ է իրականացնել ջրային խողովակների վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև համապատասխանացնել հակահրդեհային կանոններին գործող համակարգը միացնելով նրան ջրի ջրամբարի հետ: Ընկերությունը չունի ջրի ջրամբար, և ունի իր տարածքում երկու հատ 25 տոննանոց ջրային բաքեր, որոնք կարող են փոխարինել մշտական ծավալով լողավազանին: Հակահրդեհային համակարգի խողովակները պետք է միացվի բաքերի հետ, տեղադրվի ինվերտային պոմպային կայան իր սենսորային ճնշման տվիչներով: Հրավիրել ենք երկու նախագծային կազմակերպություններ՝ <SAF TEAM> ՍՊԸ և <Պրոֆմոնտ> ՍՊԸ, որոնք ներկայացրել են իրենց հակահրդեհային ջրամատակարարման նախահաշիվները: Նախնական գումարները կազմում են <SAF TEAM> ՍՊԸ-ն 2,846,088 դրամ, այդ թվում 474,348 դրամ ԱԱՀ և <Պրոֆմոնտ> ՍՊԸ-ն 11,041,798 դրամ, այդ թվում 1,840,300 դրամ ԱԱՀ:

Քվեարկության դրված հարցն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 9 /ինը/ կողմ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հանձնարարել խորհրդի անդամ Ներսես Խաչատուրի Հակոբյանին, բանակցել <SAF TEAM> ՍՊԸ-ի հետ գումարի մեծության վերաբերյալ և պատրաստել Ընկերության հակահրդեհային պատրաստման համակարգի վերաբերյալ նախագիծ, ինչպես նաև կնքել համապատասխան պայմանագիր վերանորոգման աշխատանքները կատարելու համար, ժամկետը մինչև մարտի 29-ը:

Հինգերորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց խորհրդի անդամ Ն. Խ. Հակոբյանին:

Նա ասաց, որ Ընկերությունը ունի կաթսայատուն, որը չի գործում 2006 թվականից: Կաթսայատանը գտնվում է երկու հատ իտալական վառարան և մեկ հատ չիլլեռ, որոնք գտնվում են Ընկերության հիմնական միջոցների ցուցակում, արտաքին տեսքից ունեն բարվոք վիճակ և պահանջում է դրանց վերաակտիվացումը: Խորհրդի անդամներ Ս. Կ. Գամբուրյանը, Մ. Հ. Մինասյանը և Գ. Գ. Ղազարյանը առաջարկեցին վաճառել դրանք:

Քվեարկության դրված հարցն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 9 /ինը/ կողմ:

Քվեարկության դրված հարցն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 9 /ինը/ կողմ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հանձնարարել խորհրդի անդամ Ներսես Խաչատուրի Հակոբյանին, կնքել պայմանագիր <ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ> ՍՊԸ-ի հետ կազմակերպել Ընկերության հիմնական միջոցների՝ երկու վառարանների և մեկ չիլլեռի աճուրդային վաճառք:

Վեցերորդ հարցի վերաբերյալ ձայնը տրվեց խորհրդի անդամ Ն. Խ. Հակոբյանին:

Նա ասաց, որ Ընկերության կանոնադրության մեջ ներառված չեն ներկայումս գործող <Բաժնետիրական Ընկերությունների մասին> և <Արժեթղթերի շուկայի մասին> Օրենքի կանոններին համապատասխան փոփոխությունները: Ֆինանսական առումով անցանկալի է կատարել կետային փոփոխություններ, քանի որ փոփոխությունները վերաբերվում են Ընկերության կանոնադրության ամբողջ բովանդակությանը: Ն. Խ. Հակոբյանը առաջարկեց մշակել Ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

Քվեարկության դրված հարցն ընդունվեց խորհրդի անդամների կողմից միաձայն՝ 9 /ինը/ կողմ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հանձնարարել խորհրդի անդամ Ներսես Խաչատուրի Հակոբյանին, մշակել Ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ: Ժամկետը մինչև Ընկերության տարեկան ընդհանուր ժողովը:

Խորհրդի նախագահ	Հ. Ռ. Շիրինյան
Խորհրդի անդամ	Տ. Ս. Երոյան
Խորհրդի անդամ	Ս. Է. Գրիգորյան
Խորհրդի անդամ	Հ. Լ. Եսայան
Խորհրդի անդամ	Ս. Կ. Գամբուրյան
Խորհրդի անդամ	Է. Հ. Մաթևոսյան
Խորհրդի անդամ	Ն. Խ. Հակոբյան
Խորհրդի անդամ	Մ. Հ. Մինասյան
Խորհրդի անդամ	Գ. Գ. Ղազարյան